

Բարակի եւ իր եղբոր Ապտ Ալլահի ձերբակալութեան եւ ալ-Աֆշինի յանձնումին երրորդ զլխաւոր զերակատարն է այս Իսա պին Եուսուֆ պին Իսթիֆանուս Աղուանից Հայ իշխանը:

Տարարի մեր վերը թարգմանած պատմութենէն տեսանք որ Երբ Սահլ՝ Բարակը իր բերդը կը հրաւիրէ, Բարակ կը ցանկայ որ իր եղբայրը՝ Ապտ Ալլահը պահուի Իպն Իսթիֆանուսի բերդը, որպէսզի եթէ ինք բռնուի՝ զոնէ եղբայրը ապառի եւ շարունակէ իրենց տունը, կամ թէ փոխարեւարար՝ եթէ իր եղբայրը նախ բռնուի:

Կազանկատուացի կը յիշէ Ստեփաննոս գիւնչեցեալն Աբլասադ, որ Էսթն գրքարանի եւ Էհար գրադակագիւն (էջ 376): Ակնարկութիւնը Բարաց ապստամբութեան մասին է: Աւելի վերը դարձեալ կը վկայէ. «Եւ ի նոյն ամի տէր Ներսէ՛ ի փղիպեան՝ (սրբազրէ Փղիպեան) սպան զՎարազ Տըրդատ ի Ստեփանոսեան, եւ զորդին նորին ի մօրն զոդ զենին եւ զամենայն ստացուածըս նորա յափշտակեցին: Այս Վարազ Տըրդատ « ի Միհրապեան տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնելով: Սա ութերորդ էր ի Վարազ Գրիգորէ՝ առաջին իշխանէ Աղուանից» (էջ 375):

Հոս նախ ներկայացնենք Միքիական տոհմը:

Կազանկատուացի կը պատմէ որ Սասանեան խորտու ազգական Միհրան՝ փախստական կ'ըլլայ եւ կ'ապաստանի Գարդման ու հոն ալ կը հաստատուի: Կը մտրոյ շաղգեմոյտ յո զտրոմշոյ յոյ՞ իր իշխանութիւնը՝ բնիկ իշխաններէն 12ը դաւով կը սպաննէ: Միհրան կ'ունենայ որդի մը, Արմայէլ, սա ալ կը ծնի Վարդ, որուն որդին՝ Վարդան: Վարդան իր կարգին դաւով Աղուանից գնալսնական ազգս Հայկազնեայց գեաւնշահիկս ճաշի կը հրաւիրէ եւ անոնցմէ 60 հոգի դաւով կը

սպաննէ: Այս դաւէն կ'ապառի միայն Արմիրհն Եոանշահիկը, որ Վարդանի վեասայացեալ էր, այսինքն հաւանարար Վարդան կ'ուրթեան առած էր Արմիրհն Եոանշահիկի դուստրը: Վարդանի որդին կ'ըլլայ՝ Վարդ Բ., որուն կը ծնի Վարազման, տիկինն Շուշիկ եւ Վարազ Գրիգոր. վերջինս կ'ըլլայ առաջին իշխանը Աղուանից, հաւանարար իւրացնելով Արմիրհն Եոանշահիկի իշխանութիւնը: Վարազ Գրիգոր ալ իր կարգին կ'ունենայ չորս որդիներ. Վարազ Փերոթ, Զիւանշիր, Յեղուտ Խոսրով եւ Վարազման Բ. (Կազանկատուացի, էջ 196-7):

Վարազման Բ. կ'ունենայ որդի մը՝ Վարազ Տըրդատ: Վարազ Տըրդատ իր կարգին կ'ունենայ Ստեփաննոս, որ վաղահասակ կը մեռնի (Կիսօրեայ), եւ Վարազման Գ., որ արկածով՝ Կուր զետին մէջ ջրամոյն կ'ըլլայ: Վարազ Տըրդատ կ'ունենայ երրորդ որդի մը՝ Զուանշերիկ (Անդ, էջ 374): Ահա այս մեծ զերդաստանին, Վարազ Գրիգորէ հաշուելով, ութերորդ սերունդէն կ'ըլլայ Վարազ Տըրդատ « որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնելով»: Ներսէ՛ Փղիպեան «սպան Վարազ Տըրդատ ի Ստեփանոսեան, եւ զորդի նորին ի մօրն զոդ զենին» (Անդ, էջ 375): Պատմիչը թուականին համար «ի նոյն ամի» կ'ըսէ, ակնարկելով 822ին կատարուած զէպքերուն: Նոյն այս զէպքին մասին Կազանկատուացիի շարունակողը քիչ մը աւելի մանրամասնութիւն կու տայ ըսելով. « Զայս Վարազ Տըրդատ եւ զորդի նորա Ստեփաննոս, Ներսէ՛ ի Փիլիպեան՝ ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորածորն՝ որ կոչի Դադոյի վանք: Ապա յայն աղետիցն զառն զգեցեալ զարութիւն կնոջն սպանելոյ՝ առեալ զմնացեալ իւր դուստրն Սպրամ զիշերահէն տաժանելի ուղեւորմամբ՝ մտանէ ի բերդն Խաչենոյ» (էջ 388):

Ստեփաննոսեան Վարազ Տըրդատ եւ իր մանկահասակ կամ զուրէ՛ ծծկեր որդին կը սպաննուին իրենց ազգական Ներսէ՛ Փի-